№ 7 ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 14

1896

ԹԷՀՐԱՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ՓԵՏՐՎԱՐ 14 № 7

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

# ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Հրատարակւում է ամեն չորեքշաբթի օրերը

Տարեկան գինն է Թէհրանում 12 ղռն. վեցամսեան 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղ. վեցամսեան 8 ղ. Ռուսաստան 3 րուբլի. վեցամսեան 2 րուբլի. Օտար երկիրները 8 ֆրանկ. վեցամսեան 5 ֆրանկ: Հասցէ՝ Téhéran Rédaction ASTCH-AREVELIAN

«ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆԻ» Խմբագրութիւնը բաց է ամեն օր բացի կիրակի եւ տօն օրերն:

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով. խրաքանչիւր բառին 1 շահի:

## ԲԱՑԻՒԼ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ 1896 Թ.

## Ա. Տ. „ԱՍՏՂ-ԱՐԵՒԵԼԵԱՆ" Ա. Տ.

Բաժանորդագինն է Թէհրանում տարեկան 12 ղռան վեցամսեայ 6 ղ. Պարսկաստանի օտար քաղաքները 15 ղռան, վեցամսեայ 8 ղռան: Ռուսաստան տարեկան 3 րուբլի վեցամսեայ 2 ր. Օտար երկիրներ 8 Ֆրանկ վեցամսեա 5 ֆ: Թէհրանում ձեռքով ծախուածները հատը 6 շահի: բաժանորդագինը կանխիկ է:

Բաժանորդագրութեան համար դիմել ուղղակի խմբագրութեան: Téhéran, Rédaction Astgh-Arevelian.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

----

Մելքոն Մարգարեանի մահուան առթիւ.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մի քանի խօսք. Եմաւնութիւնն պարսկահայոց մէջ. Նամակներ Ռաշտից. ԲԺՇԿԱԿԱՆ Ինֆլուէնցիայ. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ Աստղ-Արեւելեանի պատասխաններ. Դրամոց արժէք. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ Հայկական գրականութեան ոսկեդարը 500 թւականին. Նա ընկած էր.... Դէպի Հայաստան:

### ՄԵԼՔՈՆ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

----

Մեր անցեալ թւով մահագոյժի մէջ յայտնեցինք թէ պ. Մելքոն Մարգարեանի մահը, որ պատահել է Ն. Ջուղայում՝ խորին վիշտ է պատճառել մեզ:

Այո, այդ տխրաւոր մահուան առջեւ մենք յիշում ենք մօտիկ անցեալը, ուր նա իւր մի քանի գաղափարակից բարեկամների հետ միասին՝ աշխատում էր պարսկահայի լուսաւորութեան և յառաջդիմութեան մեծ գործի հիմնաքարը, հրաշագործ մամուլը հաստատելու Թէհրանի մէջ: Նրան դիմեց Թէհրանից Ուսումնասիրաց ընկերութիւնը և նա Բաթաւիոյ (Ջաւա) ազգային հոգաբարձութեան առջեւ միջնորդ հանդիսանալով՝ յաջողեցաւ 1000 գիլդըր (մերձ 92 Թում, ոսկի) մի գումար գոյացնել և այդպէսով օգնել Ուսումնասիրաց ընկերութեան Ջաւա-Հայ մամուլը Թէհրանում հաստատելու համար:

Հանգուցեալ պ. Մելքոն Մարգարեանի անխոնջ ջանքերի և ջուայեցւոց բարեսիրութեան շնորհիւ է որ այս օր պարսկահայն բաղդ է ունենում տեսնելու իւր «Աստղ-Արեւելեանն», իւր փայփայած ու փափագած գաղափարի իրագործումն:

Բարերարութիւնն, որքան էլ որ փոքըր լինի և աննշան՝ միշտ խորին երախտագիտութեան մէջ է թողնում պարտաճանաչ սրտերին: Մենք գիտենք մեր պարտքը և ամեն դէպքում պիտի յայտնենք մեր երախտագիտութիւնը այն անձերին, որոնք նիւթապէս թէ բարոյապէս օգնել և օգնում են մեզ, լրագրական այս ծանր գործում. մենք սիրով և երախտագիտութեամբ պիտի յիշենք այդ բարերարների անունները և յարգանքով պիտի վերաբերւենք դէպի նրանց անմահ յիշատակը:

---

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

---

Կարդացինք «Աստղ-Արեւելեանի» № 2-ում, որ Թէհրանում վերջերս մի «Մէր ընկերութիւն» է կազմուել, Թումանեանց անուան հովանաւորութեամբ, որի նպատակն է օգնել Թէհրանի ազգային ուսումնարաններին. և թէ այդ լինեալ ընկերութիւնը հաւաքել է մի կլոր գումար. Շատ ուրախալի է այդ, բայց որքան որ զգալի է այդպիսի ընկերութիւնների գոյութեան պէտքը և օգտակարութիւնը Պարսկաստանում, նոյնքան և սակաւ է նորանց թիւը այստեղ: Այդ ոչ այնքան նորա պատճառաւ է որ չկայ այստեղ հարուստ և կլթուած դասակարգ, ոչ, կան այստեղ շատ հարուստներ, որոնք, եթէ կամենան, կարող են իրանց լոկ դրամական օգնութեամբ տեղիս ազգային զարգացման մի շօշափելի զարկ տալ: Ոչ սակաւ են և կրթեալ ու բանիբուն երիտասարդներ, որոնք եթէ մի կողմ դնեն իրանց փառասիրութիւնը և անձնական գծուծ հաշիւները և ոխակալութիւնը ամեն մի ազգային գործում, և գործեն ճշմարիտ և եռանդոտ կերպով, այն ժամանակ նրանք կտեսնեն որ իրանց աշխատութեան արդիւնքը այն չի լինիլ՝ ինչ որ այժմ տեսնում ենք Թէհրանում: Բայց բանը այնտեղ է, որ այն ընկերավարական համերաշխութեան գաղափարը դեռ տեղիս ժողովրդի մտքում իւր աւանձին նշանակութիւնը չունի:

«Մէր ընկերութիւնը» մի մեծ յոյս է տալիս մեզ՝ ապագայում մի լաւ օրինակ լինելու տեղիս երիտասարդութեան: Բայց նրա հաւաքած գումարը և նրա օգնութիւնը մի վճռելի առարկայ է դառել այստեղի ուսումնարանների կոմիտէների մէջ, թէ «ինչու է այդ ընկերութիւնը խոստանում իւր սէրը ցոյց տալ այս ինչ թաղի վարժարանին և մերժում է օգնել միւս թաղի ուսումնարանին եւայլն.....,: Եւ իրօք եթէ այդ այդպէս է և որ նա ուզում է աչառութիւն անել՝ դա ցաւալի է. և նա այդպէս անելով՝ ցոյց կտայ որ իրա գործը հակառակ է իրա սկզբունքին: Նա պէտք է անկողմնակալ լինի և յարուի այն կողմը, որը էականապէս կարօտ է այն օգնութեան: Բայց իմ կարծիքով ոչ մէկը և ոչ միւսը կարօտ են դրան: Թող այստեղի ժողովուրդը ինքը մի քիչ աւելի հոգ տանի իր երեխայոց բարոյականի համար. թող ինքը հասկանայ իր պարտականութիւնը ազգային գործերում. թող մայրաքաղաքի ժողովուրդը զգա իրա թուլութիւնը՝ մայրաքաղաքում կանոնաւոր մի դպրոց չունենալուն համար, (թէեւ շատերն էլ զգում են այդ): Բայց կան տեղեր. Պարսկաստանում, (այսինքն գիւղերում) որոնք դեռ ուսման հոտը չեն առել և նրա կարեւորութեան մասին գաղափար անգամ չունին. Նրանք են կարօտ այդ օգնութեան իմ կարծիքով: Կան տեղեր և շատ են, որոնց օգնութիւնը անհրաժեշտ է և հարկ է փութալ, հանել նրանց այդ խաւարի ովկիանից և ես յուսով կը տայի որ այս ընկերութիւնը իր օգնութիւնը այդպիսի տեղերին տար: Ահա մի օրինակ. Սուլթանաբադի շրջակայքում, Արաքում, կան տասից աւելի հայաբնակ գիւղեր, որոնց մէջ բացի մի եկեղեցի իւրաքանչիւրում, չկայ ոչ մի ուրիշ ազգային հիմնարկութիւն, ոչ մի ուսումնավայր. ինչու, կայ մի հատ բողոքականաց տղայոց վարժարան: Դժուար կարելի է այդ տեղերում հաստատել փոքրիկ տարրական ուսումնարաններ, գիւղացիների կրթութեան համար: Դեռ որքան շատ են այսպիսի տեղեր Պարսկաստանում զանազան կողմերում. և ես յոյս ունեմ որ այդպիսիների մասին պիտի մտածէ մասնաւորապէս մեր այդ «Մէր ընկերութիւնը». և որ նա այդպէս անելով ճանապարհ պիտի բանայ և

